

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ». ԸՆՏՐԱՅԱՄԱՐԸ՝ 41



ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ՅՈՒՅԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ 150 ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԱՆՅՈՒՄԱՅԻՆ 37 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ ՍՄԲԱՏ ԿՅՈՒՐԵՂՅԱՆՆ Է

Հոկտեմբերի 1-ին «Վրացական երազանք - ժողովրդավարական Վրաստան» կուսակցության գործադիր քարտուղար եւ ընտրական շտաբի ղեկավար, Իրակլի Կոբախիձեն կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացրեց 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների կուսակցության ցուցակը: Իսկ մինչ այդ Թբիլիսիում, «Էքսպո-Ջորջիա» ցուցահանդեսային կենտրոնում, անցկացվեց խորհրդարանական ընտրություններին կուսակցական ցուցակի ներկայացման շնորհանդեսը: Թեկնածուների ներկայացման արարողությանը մասնակցեցին եւ ելույթ ունեցան «Վրացական երազանք - ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախա-



(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀՅՈՒՄԻՍԱՆՍԼԱՆՏՅԱՆ ԱԼՅԱՆՍ

ԵՆՍ ԱՏՈՒՏԵՆԲԵՐԳ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՆԱՏՕ-Ի ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է»

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԲԲՅՈՒՏԵՆՈՒՄ

Կորոնավիրուսի գլոբալ համավարակի եւ դրա կապակցությամբ սահմանված գլոբալ ծավալներով սահմանափակումների պայմաններում, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան սեպտեմբերի 29-ին իր առաջին արտասահմանյան այցը կատարեց Բրյուսել:

Վարչապետը հանդիպումներ ունեցավ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ենս Ատոլտենբերգի, Եվրոպական խորհրդի նախագահ

Շառլ Միշելի, Եվրոպական հարևանության եւ ընդլայնման քաղաքականության հարցերով Եվրահանձնակատար Օլիվեր Վար-

իեյտի, Հյուսիսատլանտյան պայմանագրի եւ Եվրոպական կառույցների հետ: (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

ՍՈՒՏՈՒՄԻ ԱՆԿՈՒՄԻՑ 27 ՏԱՐԻ ԱՆՅ



Սուխումիի անկումից անցել է 27 տարի: Տարելիցի կապակցությամբ, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների անդամները, հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները Թբիլիսիի Շերոսների հրապարակում, հայրենիքի ամբողջականության եւ ազատության համար զոհվածների հուշակոթողին ծաղկեպսակներով եւ մեկրոպե լուծությամբ հարգանքի տուրք մատուցեցին զոհվածների հիշատակին:

Ինչպես հայտարարեց Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, եղբայրների միջեւ պայքարում հաղթողներ չկան, եւ հաջողությունը ձեռք բերվել միայն համատեղ ջանքերի միջոցով:

- Անցած տարիները հստակ ցույց տվեցին, որ հաջողությունը կարելի է ձեռք բերել միայն համատեղ ջանքերով: Ինչպես արխիվները, այնպես էլ (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԱՆԹԱՆԳ ԳՈՐԳԱՍԱԼՈՒ ԸՔԱՆՇԱՆՆԵՐ՝ ԱԲԽԱՉԱԿԱՆ ԴԱՏԵՐԱԾՄԻ ՀԵՐՈՍՆԵՐ ԼԵՎՈՆ ԱՎԱԿՈՎԻՆ, ԼԵՎԱՆ ԱՄԻՐՅԱՆԻՆ, ԻՎԱՆ ՍԱՆԱԿՅԱՆԻՆ, ՌՈՒԴԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին հետմահու Վախթանգ Գորգասալու I եւ II աստիճանի շքանշաններով պարգևատրվելու հրամանագիր է ստորագրել Վրաստանի տարածքային ամբողջականության համար պայքարում ցուցաբերած բացառիկ հերոսության ու անձնագոհության համար:



Վրացական բանակի 13 զինծառայողների թվում, հրամանագրով պարգևատրվել են պաշտպանության նախարարության արագ արձագանքման կորպուսի (գվարդիայի) բրիգադի հրետանային դիվիզիոնի զինծառայողներ Լեւոն Հարությունի Ավակովը (ծնված 1968 թվականին, Թբիլիսի), Լեւոն Վախթանգի Ամիր-

յանը (ծնված 1965 թվականին, Բոլնիսի), Իվան Նարիմանի Սահակյանը (ծնված 1958 թվականին, Թբիլիսի), Ռուդիկ Աշոտի Խաչատրյանը (ծնված 1964 թվականին, Հայաստանում, սակայն հանդիսանում էր Վրաստանի քաղաքացի): Հերոս հրետանավորները զոհվել են Աբխազիայի Ջեմո Կինկլա բնակա-

վայրի մոտ, 1993 թվականին: Նշենք, որ Լեւոն Ամիրյանն այդտեղ վիրավորվել էր, նրան տեղափոխել էին Թբիլիսի, որտեղ էլ մահացավ: Պետական պարգևները հանձնվեցին հերոսների ընտանիքներին:

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՐՅԱՆՍ-ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՏՈՒՄ

Սեպտեմբերի 27-ին Աղբբեջան-Արցախ սահմանագծում սկսվեցին լայնածավալ մարտական գործողություններ:

Ինչպես նշում են հայաստանյան լրատվամիջոցներն ու պաշտոնական աղբյուրները, Աղբբեջանը լայնածավալ հարձակում է սկսել Արցախի ուղղությամբ: Ծանր հրետանու, գրահատիկայի, անօդաչու սարքերի եւ այլ զինտեխնիկայի կիրառմամբ թե՛ մարտեր են ընթանում սահմանային ողջ գծի երկայնքով:

Նույն օրը, Աղբբեջան-Արցախ սահմանագծում իրավիճակի սրման եւ ռազմական գործողությունների վերսկսման պատճառով Հայաստանի կառավարության որոշմամբ, Հայաստանում հայտարարվել է ռազմական դրություն ու զորակոչ: Արցախի Հանրապետությունում եւս հայտարարվել է ռազմական դրություն եւ համընդհանուր զորակոչ:

- Կառավարության որոշմամբ, Հայաստանի Հանրապետություն-

ում հայտարարվել է ռազմական դրություն եւ համընդհանուր զորահավաք: Որոշումը ուժի մեջ է մտնում հայտարարության հրապարակումից անիջապես հետո: Կոչ են անում գործերին կցագրված անձնակազմերին ներկայանալ իրենց տարածքային զինկոմիսարիատներ մեր հայրենիքի, մեր հաղթանակի համար: - հայտարարեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նույն օրը Հայաստանի ազգային ժողովը միաձայն պաշտպանեց ռազմական դրություն ու համընդհանուր զորակոչ հայտարարելու մասին կառավարության որոշումը եւ հանդես եկավ Աղբբեջանի ագրեսիվ գործողությունները դատապարտող հայտարարությամբ:

(Թեմայի շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԴԱՏՐԱՍՏ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՂԲԵՋԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԻՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ»

Պաշտոնական այցով Բրյուսելում գտնվող Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, Աղբբեջանի եւ Հայաստանի միջեւ ռազմական դիմակայության վերաբերյալ տարածեց հայտարարություն եւ նշեց, որ Վրաստանը պատրաստ է Հայաստանի եւ Աղբբեջանի ներկայացուցիչներին հյուրընկալել Թբիլիսիում:



- Աղբբեջանի եւ Հայաստանի միջեւ հերթական ռազմական առճակատման արդյունքում ստեղծվել է ծանր իրավիճակ, կան մեծ թվով զոհեր եւ, ցավոք, մինչեւ այժմ հնարավոր չէ ռազմական գործողությունների դադարեցում եւ երկխոսության վերսկսում:

Բոլորս էլ հասկանում ենք, որ իրավիճակի հետագա սրումը խիստ բացասական ազդեցություն կունենա ողջ տարածաշրջանի անվտանգության վրա: Մենք մեկ անգամ եւս կոչ ենք անում ԵԱՀԿ Մինսկի խմբի հա-

ՌՈՒԲԵՆ ՍԱԴՈՅԱՆԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳՈՒԹՅԱՄԲ ԱՂԲԵՋԱՆՑԻ ԴԱՏԳԱՍԱՎՈՐՆԵՐԻ ՌԱԶՄԱՄՈԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Սեպտեմբերի 28-ին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը դեսպանատանը հանդիպում ունեցավ վրացական առաջատար լրատվամիջոցների («Ռուսթավի 2», «Իմեդի», Վրաստանի հանրային հեռարձակող եւ այլն) լրագրողների հետ: Այդ մասին տեղեկացնում է Վրաստանում Հայաստանի դեսպանության մամլո ծառայությունը:

Հանդիպմանը դեսպանը մասնավորապես անդրադարձավ Արցախի դեմ Աղբբեջանի սանձազերծած ռազմական

ագրեսիային, Թուրքիայի ապակառուցողական գործողություններին, Աղբբեջանի կողմից (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

ՍՈՒԽՈՒՄԻ ԱՆԿՈՒՄԻՑ 27 ՏԱՐԻ ԱՆՑ

(Սկզբը՝ 1-ին էջում)

Վրաստանի բոլոր քաղաքացիները պետք է գիտակցենք, որ միայն համախմբված ջանքերով մենք կարող ենք բուժել անցյալի վերքերը և հիմք դնել ավելի պայծառ վաղվա օրվան, մեր ապագա սերունդների համար,- ասաց Վրաստանի նախագահը:

Հիշեցնենք, որ Աբխազիայում ռազմական առճակատումը սկսվել էր 1992 թվականի օգոստոսի 14-ին: Վրաստանի կառավարական գործերի և արքայազնական ան-

ջատողական ուժերի միջև հակամարտությունը տևել է 13 ամիս 13 օր: Խախտելով հրադադարի պայմանագիրը՝ հակառակորդին հաջողվեց վերցնել Սուխումին:

Ռուսական, հյուսիսկովկասյան և կազակների միավորումները Աբխազիայի նախարարների խորհրդի շենքի վրա գրոհել էին սեպտեմբերի 27-ին և գերի վերցրել Աբխազիայի նախարարների խորհրդի նախագահ Ժիուլի Շարտավային, Սուխումիի քաղաքապետին և նախարարների խորհրդի 27 անդամներին: Գերի-

ներին, ովքեր չլքեցին Սուխումին, գնդակահարեցին:

Վրացական կողմից չհաստատված տվյալների համաձայն, զոհվել է ավելի քան 10 000 վրացի զինվոր ու քաղաքացիական անձ: Աբխազիայից վտարված ավելի քան 300 000 մարդ մնաց անօթեան:

Սուխումիի անկման 27-րդ տարելիցի կապակցությամբ և Աբխազական պատերազմում զոհվածների հիշատակը հարգելու նպատակով, Վրաստա-



նի բոլոր վարչական շենքերից իջեցվել են պետական դրոշմները:

ՕՐԵՆԱԴԻՐ

ՎՐԱՍՏԱՆԻ 9-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆ ԱՎԱՐՏԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Երկրի սահմանդրության համաձայն, հերթական խորհրդարանական ընտրություններից մեկ ամիս շուտ, գործող խորհրդարանն ավարտում է աշխատանքը: Ելնելով վերոնշյալից՝ Վրաստանի 9-րդ գումարման խորհրդարանը սեպտեմբերի 30-ին անցկացրեց եզրափակիչ լիազուրմար միստը:

Նիստի ավարտին խորհրդարանի նախագահ Արչիլ Թալավվաձեն արգասաբեր աշխատանքի համար շնորհակալություն հայտնեց պատգամավորներին, քաղաքացիներին, մամուլի ներկայացուցիչներին և ապարատի աշխատակիցներին:

- Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլորին՝ մեր համաքաղաքացիներին, մամուլի ներկայացուցիչներին, և ապարատի այն ներկայացուցիչներին,

որին, ովքեր ջանասիրաբար աշխատում էին, որպեսզի հասցնեին ընդունել կարելու օրինագծեր: Ցանկանում եմ բոլորիդ մաղթել հաջողություն,- հայտարարել է Արչիլ Թալավվաձեն:

Հիշեցնենք, որ Վրաստանի 9-րդ գումարման խորհրդարանն իր աշխատանքը սկսեց 2016թ. նոյեմբերի 18-ին: Չորս տարվա ընթացքում օրենսդիր մարմինը փոխել է երկու նախագահների: Սկզբում խորհրդարանը

ղեկավարում էր «Վրացական երազանքի» ղեկավարներից մեկը՝ Իրակլի Կոբախիձեն, սակայն 2019 թվականի հունիսյան իրադարձություններից հետո, այսպես կոչված Գավրիլովի գիշերը նա լքեց իր պաշտոնը և խորհրդարանի նախագահի պաշտոնը ստանձնեց կառավարական թիմի ներկայացուցիչ Արչիլ Թալավվաձեն: Իր գործունեության չորս տարիների ընթացքում Վրաստանի 9-րդ գումարման խորհրդարանն ընդունեց մի շարք օրինագծեր, ներառյալ՝ Ընտրական օրենսգրքում փոփոխությունները, համաձայն որոնց երկիրը մեծ մասամբ անցավ համամասնական ընտրակարգի:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԴԱՏՐԱՍ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՂԲԵՋԱՆԻ ՆԵՐՎԱՅԱՌՈՒՅՈՒՄՆԵՐԻՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ»

(Սկզբը՝ 1-ին էջում)

մանախազահներին և միջազգային դերակատարներին, առավելագույնս օգտվել իրենց հնարավորությունները, ևսկալապիսի դադարեցման և երկխոսությունը վերսկսելու համար:

Ինչպես գիտեք, մեր երկիրը բարիդրացիական հարաբերություններ ունի երկու երկրների՝ Ադրբեջանի և Հայաստանի հետ:

Պատմականորեն, Վրաստանում բնակվող մեր ադրբեջանցի և հայ քաղաքացիները միշտ մեծ դեր են խաղացել մեր երկրի, ինչպես նաև ընդհանուր առմամբ տարածաշրջանի զարգացման ու ամրապնդման գործում: Միեւնույն ժամանակ, նրանց խաղաղ գոյակցությունը այն բանի լավ օրինակն է, որ վրացիները, հայերն ու ադրբեջանցիները ներուժ ունեն ամբողջ Հարավային Կովկասը դարձնել խաղաղության և զարգացման տարածք:

Ադրբեջան-Վրացի սահմանագծում մարտական գործողությունների վերսկսման կապակցությամբ իրենց մտահոգությունն են հայտնել նաև Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալավվաձեն, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, իսկ Վրաստանի ԱԳ նախարարությունը համոզեց եկավ հատուկ հայտարարությամբ:

Ադրբեջան-Վրացի սահմանագծում մարտական գործողությունների վերսկսման կապակցությամբ իրենց մտահոգությունն են հայտնել նաև Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալավվաձեն, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, իսկ Վրաստանի ԱԳ նախարարությունը համոզեց եկավ հատուկ հայտարարությամբ:

Ադրբեջան-Վրացի սահմանագծում մարտական գործողությունների վերսկսման կապակցությամբ իրենց մտահոգությունն են հայտնել նաև Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալավվաձեն, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, իսկ Վրաստանի ԱԳ նախարարությունը համոզեց եկավ հատուկ հայտարարությամբ:

ԹԲԻԼԻՍԱՅԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎՐԱՑ ՓՈՐՉԱԳԵՏՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ ԵՆ «ՄԹՎԱՐԻ ԱՐԽԻԻ» ԿՈՂՄԱԿԱԼ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Հոկտեմբերի 1-ին թբիլիսահայությունը դեպի վրացական «Մթավարի արխի» հեռուստաընկերության շենք իրականացվող քայլերով իր բողոքն արտահայտեց այդ հեռուստատեսության կողմից արցախա-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ հեռուստալիքի միակողմանի ընդգծված ադրբեջանամետ և ոչ արհեստավարժ գործունեության դեմ: Երթի մասնակիցների թվում էին նաև վրաց մեդիա-փորձագետները: Նշվեց, որ հեռուստաընկերությունն իրադարձությունները ներկայացնում է՝ միայն հիմնականում ադրբեջանական աղբյուրների վրա հենվելով և չճշտված տեղեկությունների վրա, ներկայացնում կեղծ լուրեր, նաև անտեսում է հեռուստատեսության ֆեյսբուքյան էջում ատելություն ու հայատյացություն պարունակող մեկնաբանությունները: Երթի մասնակիցները կոչ արեցին պահպանել լրագրողական էթիկան, գործել անկողմնակալ, ներկայացնել պաշտոնական լրահոս ու եթեր հեռարձակել օբյեկտիվ փաստեր:

Հեռուստաընկերության շենքի մոտ անցկացված հանրահավաքից հետո, թբիլիսահայերը հավաքվեցին Վրաստանում Հայաստանի դեսպանության առջև և իրենց զորակցությունը հայտնեցին Մայր Հայրենիքին ու մարտի դաշտում հերոսաբար մարտնչող հայ զինվորին: Հավաքի մասնակիցները հանդիպում ունեցան Վրաստանում Հայաստանի դեսպան Ռուբեն Սադոյանի հետ:

Արցախա-ադրբեջանական սահմանագծում մարտական գործողությունների բռնկման առաջին իսկ օրից Թբիլիսիից բացի, միջոցառումներ անցկացվեցին նաև Սամցխե-Ջավախեթի երկրամասում, որտեղ բնակիչները սկսեցին դրամահավաք և հումանիտար օգնության կազմակերպման գործընթաց:

Արդեն սեպտեմբերի 28-ին Վրաստան-Հայաստանի սահմանագծի Բավրայի անցակետով երեւան մեկնեց սննդամթերքով ու դեղորայքով բեռնված երկու բեռնատար մեքենա:

ՌՈՒԲԵՆ ՍԱԴՈՅԱՆԸ ԴԱՏԱԴԱՐՏԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳՈՒԹՅԱՄ ԱՂԲԵՋԱՆՑԻ ԴԱՏՎԱՄՎՈՐՆԵՐԻ ՌԱԶՄԱՄՈԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Սկզբը՝ 1-ին էջում)

վարձկանների օգտագործման փաստին, ինչպես նաև Ադրբեջանի կողմից

խաղաղ բնակչության թիրախավորմանը: Դեսպանը նաև դատապարտեց Վրաստանի խորհրդարանի ազգու-

թյամբ ադրբեջանցի պատգամավորների ռազմամուլ հայտարարությունները՝ մշելով, որ բազմազգ Վրաստանն այն եր-

կիրը չէ, որի խորհրդարանի պատգամավորները կարող են մեղադրվել հայտարարություններ իրենց թույլ տալ:

ՄԻԽԵԻԼ ՍԱԿՎԱՇՎԻԼԻՆ ԶՐԿՎԵՑ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐԻ ԿՈՉՈՒՄԻՑ

Արցախա-ադրբեջանական դիմակայության հերթական սրման կապակցությամբ Վրաստանի երրորդ նախագահ Միխեիլ Սակաշվիլու, մեղմ ասած, հակահայկական ուղղվածության հայտարարությունները լուրջ բողոքի հանգեցրին ինչպես Վրաստանում, այնպես էլ Հայաստանում: Հայաստանի կրթության, գիտու-

թյան, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանի հավաստմամբ, ի պատասխան Միխեիլ Սակաշվիլու նման հայտարարությունների, Երեւանի պետական համալսարանի գիտական խորհուրդը, միաձայն աջակցեց Սակաշվիլուն պատվավոր կոչումից զրկելուն: Հիշեցնենք, Վրաստանի նախկին

նախագահ իր ֆեյսբուքյան էջում գրել է, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի Հանրապետության ինքնիշխան տարածք է, և դա չի փոխվի: Ըստ նրա, յուրաքանչյուր ոք, ով վտարված է այդ տարածաշրջանից, իրավունք ունի վերադառնալ իր տուն, իսկ նրանք, ովքեր արդեն ապրում են, իրավունք ունեն ապրելու խաղաղության մեջ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈԽՐԱՏՈՒՑՈՒՄԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

Վրաստանի կառավարության նստավայրում կայացավ երկրի Կրոնի հարցերով պետական գործակալությանն առընթեր կրոնական միությունների գույքային և ֆինանսական հարցերն ուսումնասիրող հանձնաժողովի միստը, որին մասնակցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը:

Հանձնաժողովը քննարկեց կրոնական կազմակերպությունների կողմից գույքային - ֆինանսական հարցերի կապակցությամբ առաջարկությունները: Վիրահայոց թեմը ներկայացրել էր Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ, Հավլաբարի Սուրբ Էջմիածին և Թեթրիժդարոյի հայոց եկեղեցում վերանորոգչական աշխատանքների նպատակով դրամական աջակցություն ստանալու դիմում:

Վիրահայոց թեմի երեք հայտերն էլ

ստացան դրական պատասխան: Վրաստանի 2020 թվականի պետական բյուջեից «կրոնական միություններին խորհրդային ամբողջատիրական ռեժիմի ժամանակ հասցված վնասի մասնակի փոխհատուցման նպատակով» հատկացվել էր 4,5 մլն լարի, որից 3,5 մլն լարին բաշխվել էր Վրաստանի իսլամական թեմին, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմին, Վրաստանի հռոմեական կաթոլիկ թեմին և Վրաստանի եբրայական

(հրեական) թեմին: Վիրահայոց թեմը Վրաստանի կառավարությունից ստացել էր 600 000 լարի: Պետական բյուջեի գումարից տնտեսված 1 մլն լարին նույնպես համամասնորեն բաշխվեց վերոհիշյալ կրոնական միություններին, ընդ որում Վիրահայոց թեմին լրացուցիչ կարգով հատկացվեց 200 հազար լարի: Նիստին ներկա էր նաև Վիրահայոց թեմի վարչատնտեսական բաժնի տնօրեն Կարեն Երիցյանը:



Կարեն Երիցյանը:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀՅՈՒՄԱՆԻՏԱՐԱՆՑԱՆ ԱԼՅԱՆՍ

ԵՆ ՍՏՈՒՏԵՆԲԵՐԳ. «ՎՐԱՍԱՆԸ ՆԱՏՕ-Ի ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)


Ների պաշտոնական այլ անձանց հետ: ՆԱՏՕ-ի շտաբ կայանում կայացած հանդիպմանը Վրաստանի վարչապետն ու այլապես գլխավոր քարտուղարը քննարկեցին գլոբալ համավարակի պայմաններում ՆԱՏՕ-Վրաստան դինամիկ համագործակցության եւ ինտեգրման գործընթացի պահպանման ճանապարհները: Հանդիպմանը անդրադարձ կատարվեց ՆԱՏՕ-Վրաստան էական փաթեթի քննարկմանը: Զրույցի ժամանակ առանձնապես ընդգծվեց ՍԵՆ ծովի անվտանգության առումով համագործակցության խորացման նշանակությունը: Նշվեց, որ վերջին տարիներին ՆԱՏՕ-Վրաստան համագործակցությունը զարգանում է շատ դինամիկ կերպով, բարձր մակարդակի հանդիպումները եւ համատեղ գործարարությունների արդյունավետ անցկացումը հաստատում են ՆԱՏՕ-ի կողմից Վրաստանի եվրատլանտյան ինտեգրման կայուն աջակցությունը:

մամլո ասուլիսում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը հայտարարեց, որ Վրաստանի այլապես կարեւորագույն գործընկերն է եւ Վրաստանին կոչ արեց արագացնել ՆԱՏՕ-ին անդամակցման նախապատրաստումը:

- Ես Վրաստանին կոչ եմ անում օգտագործել բոլոր հնարավորությունները ՆԱՏՕ-ին եւ դաշինքի անդամակցման նախապատրաստմանը մոտենալու համար,- ասել է նա եւ նշել, որ երկիրը «հասել է մեծ հաջողությունների բանակի բարենորոգման» եւ «ժողովրդավարական բարենորոգումների» իրականացման, «ժողովրդավարական ինստիտուտների եւ բանակի ու դատական բարեփոխումների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ամրապնդման գործում, ինչպես նաեւ շնորհակալություն է հայտնել Թբիլիսիին ԱՖՊԱՍՏԱՆՈՒՄ ՆԱՏՕ-ի առաքելությանը մասնակցելու նպատակով զինվորականներ ուղարկելու համար:



Վրաստանի հրավիրեց Վրաստան: Բրյուսելում Վրաստանի վարչապետը հանդիպում ունեցավ նաեւ եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ: Հանդիպմանը կողմերը անդրադարձան COVID-19-ի գլոբալ համավարակի արդյունքում ստեղծած մարտահրավերներին եւ համավարակի դեմ պայքարի գործընթացում ձեռնարկված քայլերին: Ընդգծվել է այդ առումով Վրաստանի հաջողությունը:



ՎԱՐՍԱ ԱՐՈՅԱՆԸ՝ ՆԻՆՈՇՄԻՆԴԱՅԻ ՍԱԿՐԵՐՈՒՄԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ

Հոկտեմբերի 2-ին Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նիստում պատգամավորները սակրեբուլոյի նախագահ ընտրեցին Վահան Արոյանին:



Վահան Արոյանի թեկնածությունը պաշտպանել է 23 պատգամավոր, մեկը հրաժարվել է քվեարկության մասնակցությունից, իսկ երկու պատգամավոր բացակայել է:

33-ամյա Վահան Արոյանը ծնվել է Նինոծմինդայի մունիցիպալիտետի Հեշտիա գյուղում՝ ուսուցչի ընտանիքում: Ավարտել է Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանը՝ իրավաբանի մասնագիտությամբ: Որպես փաստաբան աշխատել է Նինոծմինդայի հանրակրթական ռեսուրսային կենտրոնում, ապա կրթության նախարարության ենթակառուցվածքների վարչությունում, Ախալքալաքի մունիցիպալիտետի դպրոցներում՝ որպես իրավախորհրդատու: 2017 թվականի տեղական ընտրություններին ընտրվել է սակրեբուլոյի պատգամավոր՝ Հեշտիայի տարածքային միավորից:

Հիշեցնենք, որ Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահի պաշտոնը թափուր դարձավ, երբ այդ պաշտոնն զբաղեցնող Սմբատ Կյուրեղյանը հրաժարական տվեց «Վրացական երազանքին» կուսակցական ցուցակով առաջադրվելու պատճառով:

ԹԻՆԱԹԻՆ ԲԵՐՁՆԵՆԻՇՎԻԼԻՆ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒԳԼԻՆԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Վրաստանի հանրային հեռարձակողի հոգաբարձական խորհուրդը բաց քվեարկությամբ, Թինաթին Բերձենիշվիլուն ընտրեց հեռուստալիքի գլխավոր տնօրեն: Բերձենիշվիլու օգտին քվեարկել են խորհրդի ութ անդամները:



Թինաթին Բերձենիշվիլին Վրաստանի Առաջին ալիքի գլխավոր տնօրենի առաջին տեղակալն էր եւ ներկայումս կատարում էր գլխավոր տնօրենի պարտականությունները: Նա եվրոպական հաղորդակցական միության (EBU) մեդիա կոմիտեի անդամ է եւ նույն կազմակերպության գեներալային հարցերի խմբի ղեկավար:

ԹԵՄ ՏՈՒՄԻՎԻԱՆԻ. «ԻՐԱՎԱՆԱՑՎԱԾ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԷԿՎԱՆՈՐԵՆ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է ԴԱՏԱՐԱՆԻ ՆԿԱՏԱՍԲ ՎԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ»



Սեպտեմբերի 30-ին Վրաստանի արդարադատության նախարար Թեմ Տուլուկիանին հանրագումարեց այդ պաշտոնում իր գտնվելու 8-ամյա գործունեության արդյունքները: Հաշվետվության ներկայացմանը ներկա էին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների, իրավապահ կառույցների ներկայացուցիչներ:

տարածքով առանձին բնակավայրերում արդարադատության տների, հասարակական կենտրոնների բացման կարեւորությունը: Ինչպես ասաց Թեմ Տուլուկիանին, գրեթե ութ տասնյակի հասնող նման հաստատությունների գործունեության արդյունքում զգալիորեն բարձրացվել է բնակչությանը սոցիալական եւ պետական սպասարկումների մատուցման որակը: Անդրադառնալով դատական ոլորտի բարեփոխումների թեմային՝ Թեմ Տուլուկիանին նշեց, որ իրականացված փոփոխությունների արդյունքում գրեթե ութ անգամ նվազել է Վրաստանից Ստրասբուրգի միջազգային դատարան առաքվող բողոքների թիվը եւ Վրաստանում դատական իշխանության նկատմամբ վստահությունը գրեթե հասցվել է եվրոպական ցուցանիշին: Հիշեցնենք, որ արդարադատության տներ գործում են երկրի գրեթե բոլոր բնակավայրերում, մասնավորապես, Բուրժուխում, Ախալքալաքում, հասարակական տներ Ասպինձայում, Ածղուրիում, Բակուրիանիում, Գուլբուրդյուլում, Բարալեթիում, Վալեում, Թեթիծարոյում եւ այլուր:

ՆՈՐՈՒՅՑ

FINCA Bank ԳՈՃՅՆ ԺԱՃՅՈ. Ակցիայի պայմանները հստակ են. ով հոկտեմբերի 1-ից մինչեւ հոկտեմբերի 31-ը ներառյալ, բոլորից շատ ծավալով

ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈՒՍՏԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՎԵՏ ԵՆ «Ֆինկա» բանկը սպառողներին առաջարկում է շահավետ հոկտեմբեր՝ ստացել կամ ուղարկել միջազգային դրամական փոխանցումներ եւ պարգևատրվել դրամական պարգևով: Վրաստանի փոխանցումներ կիրականացնի, ապա ամսվա վերջին կստանա 50 լարի: Ակցիան կունենա 36 հաղթող՝ «Ֆինկա» բանկի բոլոր սերվիս կենտրոնները կունենան իրենց ամենակապիտալ սպառողներին հայտնաբերելու հնարավորություն: Ներգրավվե՛ք, ցուցաբերե՛ք ակտիվություն եւ հաղթե՛ք: «Ֆինկա» բանկ՝ ավելի շատ ազդակ ձեր նպատակների համար:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՖԻՏՈՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ԻՐԱՎԱՆԱՍՏՈՒՄՆԵՐ ԶԻՅՏՏԱԳՐՎԱԾ ԱՊՐԱՆՔ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՏՈՒՄ «Փոթի» տնտեսական ձեռնարկման գոտում Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային դեպարտամենտի աշխատակիցները հայտնաբերել են չհայտազրկված ապրանք: Ապրանքի մաքսային արժեքը կազմում է 37,240 լարի: Գործի նյութերը հետագա արձագանքման համար փոխանցվել են Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայությանը:

«ՎՐԱՑԱՎԱՆ ԵՐԱԶԱՆՔ». ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 41



ԿՈՒՍԱԿՅԱՎԱՆ ՅՈՒՅԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ 150 ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԱՆՅՈՒՄԱՅԻՆ 37 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ ՍՄԲԱՏ ԿՅՈՒՐԵՂՅԱՆՆ Է

(Սկիզբը 1-ին էջում)

գահ Բիծինա Իվանիշվիլին, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, կուսակցության գլխավոր քարտուղար, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, կուսակցության գործադիր քարտուղար, «Վրացական երազանք» կուսակցության ընտրական շտաբի պետ Իրակլի Կոբախիձեն, Թեա Շուլուկիանին, Իվանե Մաճավարիանին, Նաթիա Թուրնավան, Մայա Ցքիտիշվիլին, Միխեիլ Զխենկելին, ուրիշներ:

«Վրացական երազանք» ժողովրդավարական Վրաստանի» կուսակցական ցուցակը գլխավորում է Գիորգի Գախարիան: Երկրորդ եւ երրորդ համարում ներկայացված են Վրաստանի 9-րդ գումարման խորհրդարանի ներկայիս եւ նախկին նախագահներ Արչիլ Թալավաձեն եւ Իրակլի Կոբախիձեն: Առաջին տասնյակում են նաեւ Թեա Շուլուկիանին, Մամուկա Մոխիանիան, Կախաբեր Կուճավան, Գիորգի Կախարիան, Մարիամ Զվրիվիշվիլին, Միխեիլ Սարջվելաձեն եւ Մախա Բիթաձեն:

Կուսակցական ցուցակում անցումային 37 համարի տակ ներկայացված է նիւնոսմիդայի Սմբատ Կյուրեղյանը, ով սեպտեմբերի 30-ին անձնական դիմումի հիման վրա ազատվեց Նինոսմիդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահի պաշտոնից: Նշենք, որ կուսակցությունից Ախալքալաքի եւ Նինոսմիդայի ընտրատարածքում առաջադրված մեծամասնական պատգամավորության թեկնածու Սամվել Մանուկյանը:

ԲԻՑԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱԳԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՆ Է»

Յոկոտեմբերի 1-ին Թբիլիսիի «Եքսպո-Ջորջիա» ցուցահանդեսային կենտրոնում անցկացված «Վրացական երազանք» կուսակցական ցուցակի ներկայացման շնորհանդեսին կուսակցության նախագահ Բիծինա Իվանիշվիլին, հանրագումարելով իշխանության գլուխ գտնվելու 8-ամյա ժամանակահատվածը, հայտարարեց, որ հոկտեմբերի 1-ը Վրաստանի պատմության մեջ արդեն գրանցվել է որպես վրաց ժողովրդի միասնության, ազատության ու հաղթանակի խորհրդանշի:

Այսօր հոկտեմբերի 1-ն է, օր, որն արդեն արձանագրվել է մեր երկրի պատմության մեջ՝ որպես վրաց ժողովրդի միասնության, ազատության ու հաղթանակի խորհրդանշի: 2012 թվականին մենք պայքարեցինք գոյատևման համար, որպեսզի փրկենք մարդկանց եւ երկիրը վախից, ճնշումից ու բռնությունից: Այսօր՝ 2012 թվականի հոկտեմբերի 1-ի ընտրություններից ութ տարի անց, մենք ապրում ենք մի երկրում, որտեղ ազատությունը այլևս ձեռք չի բերվում պայքարի միջոցով, մարդիկ այլևս չեն հետապնդում տարբեր քաղաքական նախասիրությունների պատճառով, կառավարության հանդեպ վախը եւ բռնությունները մնացել են անցյալում, որտեղ պետությունը գոյություն ունի մարդու համար եւ ոչ թե հակառակը:

Այսօր մեր կուսակցությունը՝ «Վրացական երազանք» ժողովրդավարական Վրաստանը, մարդկանց առաջարկում է մի ծրագիր, որը պետք է անդամալի դարձ-

նել երկրի ժողովրդավարական զարգացումը, ապահովել տնտեսական առաջընթացը եւ էապես փոխել մեր յուրաքանչյուր քաղաքացու կյանքը դեպի դրականը,- հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին ու հավելեց, որ ինքը պարտավոր է գեկուցել մարդկանց, թե ինչ է արվել անցած ութ տարիների ընթացքում:

Բիծինա Իվանիշվիլու խոսքով, «Վրացական երազանքը» իշխանություն գալուց անց, ամբողջովին փոխել է քաղաքական փոփոխությունը եւ գլխավոր առաջնահերթություն է դարձրել մարդուն:

Այդ իսկ պատճառով մեկ մարդու անսահմանափակ իշխանությանը հարմարեցված, տգեղ սահմանադրության փոխարեն, ընդունվել է նոր, իսկապես եվրոպական չափանիշներին համապատասխան սահմանադրություն: Սա եվրոպական ճանապարհ է, իրական եվրոպական արժեք, ժողովրդավարությունը պարզապես այլ վերաբերմունք չգիտի,- ընդգծեց Բիծինա Իվանիշվիլին:

Անդրադառնալով մրցակից կուսակցությունների կողմից տարածվող լուրերին՝ Բիծինա Իվանիշվիլին հիշեցրեց այն իրավիճակը, որի պայմաններում գտնվում էր երկիրը մինչեւ 2012 թվականի հոկտեմբերի 1-ը:

Իրոք, զարմանալի ցինիզմ է, երբ այլատերված, սակայն բավականին խելացի քաղաքական թիմը, բացարձակապես անփոփոխ կազմով, ցանկանում է նորից խաբել ժողովրդին եւ վերադարձնել անսահմանափակ իշխանությունը, որ կրկնապատկված ջանքերով հաշվեհարդար լինի բոլոր այն հայրենասերների նկատմամբ, ովքեր հոկտեմբերին նպաստեցին այն բռնի իշխանության ավարտին: Վերջին մի քանի շաբաթների ընթացքում մենք լսել ենք կեղծ ափսոսանքի եւ թատերական կեղծավորության խայտառակ օրինակներ, որոնք եւս մեկ անգամ ապացուցում են, որ նրանք շատ ցածր պատկերացում ունեն սեփական ժողովրդի մասին, եւ կարծում են, որ պարզ կկարողանան շահարկել մարդկանց հույզերն ու զգացումները,- հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին եւ հավելեց, որ վրաց ժողովրդի, նրա մշակույթի, ավանդույթների, աշխարհընկալման եւ «ազգային շարժման» իշխանության գոյակցությունը հիմնովին անհնար է:

Մենք միշտ կհիշենք վրացական ավանդական կյանքի այլատերման, մեր մշակութային ինքնությունը ջնջելու եւ վրացական պատմության վերաշարադրման հիվանդագին ծարավը, ընտանեկան ֆեոդալների վրա կատաղի հարձակումները, վրացական պետականության հիմնասյուններից մեկի՝ վրացական ուղղափառ եկեղեցու հետապնդման փորձերը,- հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին:

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՈՒՐԱՆՆԵՐ. «ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ «ԵՐԱԶԱՆՔ» ԿՍԱՆԱ ՉԱՅԵՐԻ 60 ՏՈՎՈՍԸ»

Յոկոտեմբերի 1-ին, ներկայացնելով առաջիկա խորհրդարանական ընտրությունների «Վրացական երազանքի» կուսակցական ցուցակը, կուսակցության գործա-



դիր քարտուղար, ընտրական շտաբի ղեկավար Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ ընտրություններին կունենա որակապես ու էապես ուժեղացված խորհրդարանական թիմ:

Մենք ներկայացրել ենք մեր ընտրացուցակը, կան եւ ներկայիս պատգամավորներ, եւ նոր դեմքեր՝ ինչպես քսանյակում, այնպես էլ՝ դրանից դուրս: Մենք կունենանք որակապես եւ էապես ուժեղացված խորհրդարանական թիմ բոլոր ոլորտներում, ներառյալ՝ արտաքին քաղաքականությունը, առողջապահությունը ու կրթությունը: Սա նույնպես պետք է դառնա մեր ընտրական հաջողության հիմքերից մեկը: Ներկայացված են շուրջ 40 գործող պատգամավորներ,- նշեց Իրակլի Կոբախիձեն եւ հավելեց, որ իրենք ակնկալում են ընտրողների 60 տոկոս ձայների աջակցությունը:

Մենք ակնկալում ենք, որ մեր ցուցանիշը 50 տոկոսից բարձր կլինի, այսինքն՝ կարող ենք ստանալ մոտ 70 մարդ անցնելու հնարավորություն ունի, այսինքն՝ մենք խորհրդարանում կունենանք համամասնական եւ մեծամասնական 100 պատգամավոր: Մենք դրա համար ունենք բոլոր ռեսուրսները, բայց ամեն ինչ կորոշեն ընտրողները,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

Նա վստահություն հայտնեց, որ ընտրությունների արդյունքներով, «Վրացական երազանքը» հնարավորություն կունենա ձեւավորել միակուսակցական կառավարություն, ինչը, ըստ Կոբախիձեի, շատ կարեւոր է երկրի ժողովրդավարական զարգացման համար:

Յիշեցնենք, որ հոկտեմբերի 31-ին խորհրդարանական ընտրություններին ընտրվելու է գերագույն օրենսդիր մարմնի 150 պատգամավոր, ընդ որում՝ նրանցից 30-ն ընտրվելու է մեծամասնական, իսկ 120-ը՝ համամասնական ընտրակարգով: Ընտրաշեմը նվազեցվել է հասցվել է նվազագույն՝ մեկ տոկոսի, ինչը ենթադրում է ավելի շատ կուսակցությունների անցողիկությունը խորհրդարան: Այս ընտրություններում քվեարկելու իրավունք ունի 3,550 054 Վրաստանի քաղաքացի՝ ինչպես երկրում, այնպես էլ՝ արտերկրում:

ԵՐԲ ԿՈՒՍԱԿՅԱՎԱՆ ՅՄՈՐ ՎԱՐԿԱՆԻՇՎ ԵՐԱՌՄ Է ԶԳԻՏԱԿՅՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Սեպտեմբերի 30-ին «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» քաղաքական միավորման գործադիր քարտուղար, կուսակցության նախընտրական շտաբի ղեկավար Իրակլի Կոբախիձեն վերջին օրերին, նախընտրական քարոզարշավի շրջանակներում, Բոլնիսիում եւ Մառնեուլիում տեղի ունեցած միջադեպերի կապակցությամբ, հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ նշեց, որ արմատականորեն տրամադրված ընդդիմադիր կուսակցությունների շատ ցածր ընտրական վարկանիշը նրանց մղում է դիմել սադրանքի եւ չգիտակցված գործողությունների:

Այդ կապակցությամբ մենք զգուշացնում էինք մեր ակտիվիստներին, զգուշացնում, որ չենթարկվեն սադրանքի: Ցավոք, չնայած կանխիկ միջոցների, արմատական ընդդիմությունն առանձին դեպքերում կարողացավ հրահրել սադրիչ միջադեպեր: Ցանկանում են ձեռն ուշադրությունը բեւեռել այն հանգամանքի վրա, որ առանձին սադրիչ գործողությունների հրահրման տեսանկյունից, հիմա էլ աչքի են ընկնում այն թեկնածուները, ովքեր տարիների ընթացքում ձեւավորվել են որպես արհեստավարժ սադրիչներ: Դրանք են, առաջին հերթին, Նիկանոր Մելիան եւ Ակմամեդ Իմամկուլիելը, որոնց մասնակցու-

թյամբ անցած տարիներին մենք տեսանք մի շարք նախընտրական միջադեպեր: Սադրիչ ծանր վարքով աչքի է ընկնում նաեւ Կախա Օքրիաշվիլու ակտիվությունը, ինչը կրկին հաստատեց այն, որ «Վրացական երազանքից» նրա վտարումը մեր քաղաքական թիմի համար այլընտրանք չներառող ճիշտ որոշում էր:

Իրավապահ մարմիններին կոչ են անում, օրենսդրության համաձայն, ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները միջադեպերի կանխման, իսկ տեղի ունեցած միջադեպերի համար պետք է պատասխանատվության ենթարկվեն բոլոր իրավախախտողները,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈՎՔԵՐ ԵՆ ԸՆԴԴԻՍՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՅԱՎԱՆ ՅՈՒՅԱԿՆԵՐԻ ԱՌԱԶԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ

Յոկոտեմբերի 1-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովին իր կուսակցական ցուցակը ներկայացրեց նաեւ ընտրություններին մասնակցության հայտ ներկայացրած եւ ԿԸԳ-ի կողմից գրանցված ընդդիմադիր մի շարք կուսակցությունները:

Մասնավորապես, «Լեւո» կուսակցության համամասնական կուսակցական ցուցակի առաջին վեցնյակում ներկայացված են քաղաքական միավորների ղեկավարներ Մամուկա Խազարաձեն, Բադրի Ջափարիձեն, Դավիթ Ուսուփաշվիլին, Աննա Նազվիշվիլին, Իրակլի Կուկարաձեն եւ Փիքրիա Զիխրաձեն:

«Նինո Բուրջանաձե» - Միասնական Վրաստանի» կուսակցական ցուցակը, ինչպես եւ սպասելի էր, գլխավորում է կուսակցության ղեկավար Նինո Բուրջանաձեն: Ցուցակի առաջին հնգյակում են Գիզլա Բարամիձեն, Անգոր Բիծաձեն, Օթար Թավարթիլաձեն, Բեսու Դանելիան:

«Եվրոպական Վրաստանը» հանրությանը ներկայացրեց կուսակցության ընտրական ցուցակի առաջին տասնյակում ներառված են Դավիթ Բաքրաձեն, Շավլա Շավգուլիձեն, Էլենե Խոշտարիան, Արմազ Ավալեդիանին, Տարիել Նակաիձեն, Խաթունա Գոգորիշվիլին, Սերգի Կապանաձեն, Գիզի Ծերեթելի, Իրմա Նադիրաշ-

վիլին, Բեթան Բուցխրիկիձեն: Ցուցակում են նաեւ Գիզի Ուզուլավան, Գիզի Բուկերիան, Տարիել Լոնդարիձեն, Լեւան Թարխիշվիլին, Գոչա Գուրգուչիանին, Արսեն Կարապետյանը, Ջուրաբ Զիլինգարաշվիլին: Ընդ որում, ինչպես նշեցին կուսակցությունում, ցուցակում թեկնածուների հերթականությունը խիստ պայմանական է:

Ինչ վերաբերում է «Միասնական ազգային շարժում» - ուժը միասնության մեջ է» միավորման համամասնական ցուցակին, ապա առաջին համարում ներկայացված է դերասան եւ երգիչ Վախթանգ (Բուբա) Կիկաբիձեն: Ցուցակի առաջին տասնյակում տեղ են գտել նաեւ Գրիգոլ Վաչաձեն, Նիկա Մելիան, Խատիա Դեկանոիձեն, Կոբա Նադոփիան, Դեի ճանկոտաձեն, Լեւան Վարշալամիձեն, Սալոմե Սամադաշվիլին, Ջալա Ուղումաշվիլին եւ Խաթունա Սամիձեն: Ցուցակում են նաեւ Ռոման Գոցիրիձեն, Կախա Օքրիաշվիլին, Ազեր Սուլեյմանովը, Մելիք Ռախսյանը, Գուբազ Սանիկիձեն: